բնական հետևանքն են մեր դպրոցներում տեղի ունեցած թերութիւնները։ Նոյն Մեղուի 38 համարում տպուած Շուշուայ երկսեռ դպրոցների մասին թղթակցութիւնը շատ տխուր գոյներով է նկարագրում դպրոցների դրութիւնը։ Մեր դպրոցական հաստատութեանց և յատկապէս Շուշիի դպրոցների վարչութեան ուշադրութեանն է յանձնում խմբագրութիւնս յիշեալ գրուածքները Մեղուի։ Յուսալով թէ մեր դպրոցների վարչութիւն կազմող անձինք վերջապէս կը մտածեն թէ օրպիսի սուրբ պարտականութիւն են ստանձնել իրանք։ Նոքա պէտք է մտածեն որ, թէև հասարակութիւնը դեռ անտարբերութեամբ հետամուտ չէ իւր հասարակական գործերին, թէև իշխանութիւնը ներողամիտ աչքով է նայում, սակայն կը գայ ժամանակ որ այդ երկուքն էլ իրանց դերի մէջ կը մտնեն և իրանց խղճի դատաստանին մտիկ չանող պարոնները կը պարտաւորուին խիստ պատասխանատուութեան ենթարկուել։

—

«Մշակ» լրագրի 85 համարում տպուած Արիստակէս աւագ քահանայ Թէնքլեանի նամակի վերայ վստահանում է խմբագրութիւնս հրաւիրել Թիֆլիզի թեմի վիճակաւոր Գեր. Արիստակէս եպիսկոպոսի, Կոնսիստորայի և Թեմական տեսչի ուշադրութիւնը։

—

Հաղորդումն խմբագրութեանս, որ Վաղարշապատի տղայոց դպրոցի հոգաբարձուաց եռամեայ ժամանակամիջոցը լրացած լինելով մտադիր են շուտով հրաժարել իրանց պաշտօնից։ Ժողովրդի ուշադրութիւնն ենք հրաւիրում շուտով նոր հոգաբարձուներ ընտրել, որպէս զի յառաջիկայ ուսումնական շրջանին դպրոցի վիճակը բոլորովին չը դժուարանայ և փակման վտանգին հանդիպի, ինչպէս հաւաստիացնում են շատերն ի նկատի ունենալով ձախող հանգամանքները։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

23 Մարտի, Սինոդը ի նկատի ունենալով Ցովակիմեան Արժ. Ղեոնդ վարդապետի խնդրագիրը, որով յայտնում է թէ հանգուցեալ Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի և Սինոդի հրամանով վարած լինելով երկար ժամանակաւ Տպարանական ժողովի անդամութեան պաշտօնը և այժմ ծանրաբեռնուած լինելով ճեմարանում Հայնագրութեան դասատուութեամբ և վերակացութեան պաշտօնով՝ խնդրում է տկարութեան պատճառով արձակել իրան Տպար. Ժողովի անդամութիւնից։ Սինոդը ըստ խնդրանաց նորա արձակելով Տպար. Ժողովի անդամութեան պաշտօնից. Զ-ն Մայիսի կարգեց վերակացու Վենհարանական կայից և գրչից, որոնք

1867 թուից մնացած էին առանց պաշտօնական վերահսկողի։ Վեհարանի իրեղինաց ցուցակագրութեան ըստ օրագրութեան ներկայ պէտք է լինին Սինոդի անդամներ — Դեր. Տէր Մեսրովբ և Ներսէս սրբազան եպիսկոպոսք։

—

9 Մայիսի։ Սինոդը ի նկատի ունելով Վրաստանի Հայոց վիճակաւոր առաջնորդի տարւոյս Մարտի 14 ին մատուցած յայտարարութիւնը, պատուիրում է Վրաստանի թեմի հայ եկեղեցեաց Երեսփոխանական հաշիւների զննութեան համար կարգած մասնաժողովի եղրակացութիւնները որոշակի յայտարարութեամբ զեկուցանել Սինոդին։

—

20- Մայիսի։ Սինոդը ի նկատի ունելով Բագրեւանդայ Ղարաբիլիսէի հայազգեաց բաղմաստորագիր խնդիրը, որով տեղւոյն հայազգիք յայտնում են իրանց թշուառութիւնները յոբ գաղթականութեան, առաջարկում է Միացեալ ընկերութեան Ղարաբիլիսէյում մի դպրոց բանալ և յանուն Ալաշկերտի գաղթականութեան հանգանակեալ դրամների տոկոսը, որ իւրաքանչիւր տարի ստանում է ընկերութիւնը, գործադրի դպրոցի յարատեւութեան համար։

—

27- Մայիսի։ Սինոդը ի տեղի հրաժարականով արձակուած Անանիա վարդապետի Համազասպեան, նշանակեց Աղուլիսի Ս. Թումայ վանուց վանահայր Աղաֆիրեան Դեր. Գրիգոր եպիսկոպոսին ըստ ցանկութեան իւրում՝ որ տկարութեան պատճառաւ հրաժեշտ տուած էր ճեմարանի ուսուցչութեան պաշտօնից։

—

27 Մայիսի։ Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի պաշտօնական և մասնաւոր թղթերը ցուցակագրելու և կարգի դնելու համար նշանակուեցին Անդամք Սինոդի Դեր. Տեարք Մեսրովբ և Յովակիմ Սրբազան եպիսկոպոսունք, և Սինոդի Տնտեսական Մասնի կառավարիչ աստիճանաւոր Պ. Ղազար Տէր Ղազարեան՝ իրրև քարտուղար։

—

27 Մայիսի։ Սինոդը ի նկատի ունելով Աստրախանայ Կոնսիստորիայի յայտարարութիւնը, իւր հրաժարականի հիման վերայ արձակեց Աստրախանի հոգևորականաց որբոց և այրեաց երեքտասանամեայ հոգաբարձութեան անդամութիւնից Պապովեան Տէր Աբրահամ քահանային, տեղը հաստատելով Արժ. Թադէոս քահանայ Կոժենեանին։

—

30 Մայիսի։ Արժ. Սահակ վարդապետ Բաղդասարեան նշանակուեց Ալէքսանդրապոլու վիճակի խոխանորդ ի տեղի Արժ Յուսիկ վարդապետի Մովսիսեան, որ իւր տկարութեան պատճառով երիցս հրաժարականի յայտարարութիւն տալուց յետոյ գալով Ս. Էջմիածին երիցս ևս յատենի Սինոդի թախանձանաք խնդրեց յարդել իւր խնդիրն և արձակել Ալէքսանդրապոլու փոխանորդութիւնից։

—

30 Մայիսի։ Ղազախու Ս. Մակարայ վանքի վանահայր նշանակուեց Արժ. Յովնան արեղայ Սուքիասեան։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

9 Մայիսի։ Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը Սինոդը ի նկատի ունենալով՝ վերահաստատում է Կոնսիստորիայի վճիռը, որով Դաղէթու Աղէքսանդր քահանայ Արարատեանը պարտաւորվում է տասն և հինգ ռուբլի տուգանքի և միամեայ ժամանակով Վրաստանի մի վանքում՝ ապաշխարանքի, նորա զանազան ապօրինի վարմանց և

չորրորդ աստիճանի խնամեկան շրհասութեամբ պսակ օրհնելուն համար, պսակն ևս անվաւեր է համարուած։

—

9 Մայիսի, Սինոդը ի նկատի ունելով, Շամախու Կոնսիստորիայի յայտարարութիւնը՝ վերահաստատումէ Կոնսիստորիայի վճիռը, որով Յովհաննէս քահանայ Տէր Աւագեանցը և Սահակ աւագ քահանայ Տէր Սահակեանը իւրեանց խռովարար բնաւորութեան համար զգաստումեն քահանայագործութիւնից՝ երթարկվումեն մի ամսեայ եկեղեցական ապաշխարանքի։

—

20 Մայիսի. Սինոդը ի նկատի ունելով Թիֆլիզի Կոնսիստորիայի յայտարարութիւնը և Գորեոյ փոխանորդի հեռագրական ծանուցումն, նոր բայազիտու գաւառի Ադիամանցի Յովհաննէս քահանայ Տէր Ոսկանեանցին Խոր Վիրապի վանքում անորոշ ժամանակով առանց փիլոնի ունկնդիրների կարգում ապաշխարանքի ենթարկեց, նորա առանց մերձաւոր իշխանութեան թոյլտուութեան՝ ինքնագլուխ դէպի Տփխիս գնալուն համար, Գորեոյ կողմերում մերձաւոր խնամութեան աղագաւ Սինոդից արգելուած պսակը կատարելուն և այլ աններելի յանցանքներ գործելուն համար։

ԴՊՐՈՑԱԿԱՆՔ

9 Մայիսի, Յարգելի պարոնայք Աստուածատուր Կաճկաճեան, բժիշկ Ռոմանոս Մելիքեանց, Եղայի Մելիքեանց, Մինաս Պիտանեանց Ղըղլարու հայ հասարակութեան համախոսական ընտրութեամբ և առաջարկութեամբ հաստատուեցին երեքամեայ ժամանակով տեղւոյն երկսեռ դպրոցաց հոգաբարձու հրամանաւ Սինոդի։

—

9 Մայիսի, Սինոդը ի նկատի ունելով Շամախու թեմի Կառավարչի յայտարարութիւնը, Մադրասայի նորաբաց օրիորդական Ծխական հոգևոր դպրոցի համար տեղւոյն հայազգեաց համախոսականով ընտրուած յարգելի պարոնների — Էֆենդեանց Գրիգորին, Գէորգեան Տէր Սահակեանց Գրիգորին, Շահվերտեանց Ալէքսանդրին, Զլովիարեանց Գաբրիէլին հաստատեց հոգաբարձու։

—

11 Մայիս, Արժ. Խորէն քահանայ Միրզաբէկեան, պարոնայք Սերգէյ Միքայէլեան Վարշամեանց, Եղիշէ Նաբաթեան, Ստեփան Տէր Յովհաննեան, Սահակ Ադամեան, և Միքայէլ Մատաթեան հաստատուեցին ըստ համախոսական թերթի հայազն հասարակութեան Բաքուայ եռամեայ ժամանակով առաջինը նախագահ հոգաբարձութեան, իսկ մնացեալքը՝ հոգաբարձու երկսեռ հոգևոր դպրոցաց տեղւոյն. անձնափոխանորդ են Պ. Պ Ալէքսանդր Ներսէսեան, Գէորգ Միրզաբէկեան, Յովսէփ Պօղովեան և Սերգէյ Կրասիլնիկեանց։

—

20 Մայիսի, Բաքուայ Շամախու ճանապարհի թաղի հայ Հոգ. երկսեռ դպրոցաց հոգաբարձու հաստատուեցին երեք ամեայ ժամանակաւ Արժ. Հարք Թադէոս աւագ քահանայ Բուդաղեան նախագահ. Գրիգոր քահանայ Տէր Գրիգորեան, Պարոնայք Պօղոս Սարգսեանց, Համբարձում բէկ Իւզբաշեանց՝ գանձապետ, Աբրահամ Սարուխանց, Յակոբ Փիրզատեանց և Հայրապետ Քոչարեանց։